ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2021-2-2-Ա

ք. Երևան 21.04.2021թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2021 թվականի ապրիլի 21-ի նիստում քննարկեց 2020 թվականի նոյեմբերի 16-ին արտոնագրային հավատարմատար Վանիկ Մարգարյանի կողմից ներկայացված՝ «Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ ընկերության (Երևան, Աշտարակի խճղ. 2ա, ԱՄ) «ՐԱՖՖԻ РАФФИ RAFFI» (No20200207) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 93-րդ կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը հակասում է հասարակական կարգին, մարդասիրության կամ բարոյականության սկզբունքներին, ինչպես նաև անհարիր է ազգային կամ հոգևոր արժեքներին: Ազգային և հոգևոր արժեքներ են համարվում նյութական, գիտական, մշակութային արժեքները, ինչպես նաև հոգևոր արժեքները: Արժեք հասկացությամբ նշվում է այն հանգամանքը, որ մարդկային գործունեության մեջ ներգրավված իրականությունը ձեռք է բերում մի նոր հատկանիշ, այն իմաստավորվում է հասարակական-մշակութային և հոգևոր ենթատեքստում և դառնում որոշակի գնահատականների առարկա: Տվյալ դեպքում հայտարկված «ՐԱՖՖԻ РАФФИ RAFFI» նիշը ենթակա չէ գրանցման, քանի որ այն ներառում է հայ ժողովրդի պատմության մեջ նշանակալի և առանձնահատուկ տեղ զբաղեցնող, հայազգի մեծանուն գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ «Ռաֆֆի»-ի (իրական անունը՝ Հակոբ Մելիք-Հակոբյան) անունը, ով մշտապես մեծարվել է հայ ժողովրդի կողմից, ում անունով կոչվել են դպրոցներ և փողոցներ, ինչը փաստում է

նրա անձի հանդեպ մեծ հարգանքի մասին, ուստի, նրա անունը զետեղելը ալկոհոլային խմիչքների վրա, հարիր չէ մեր ազգային մտածելակերպին: Ինչ վերաբերում է Ձեր կողմից ներկայացված նկատառումներին, այն է՝ «Ռաֆֆու անունը զետեղելը այնպիսի ալկոհոլային խմիչքների վրա, ինչպիսիք են հայկական կոնյակը կամ գինին, որի արդյունքում ևս մեկ անգամ մեծարվում և աշխարհով տարածվում հայ մեծերի անունը, չի կարող համարվել ազգային արժեքներին հակասող», ապա, տեղեկացնում ենք, որ հայտում, բացի «հայկական կոնյակ (բրենդի) կամ գինի» ապրանքներից, ներկայացված են այլ ալկոհոլային խմիչքներ, որոնց վրա հայ մեծանուն գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ «Ռաֆֆի» անունը զետեղելը հարիր չէ մեր ազգային մտածելակերպին:

Կոլեգիայի նախագահը հիմք ընդունելով, որ բողոքարկողը բողոքում ներկայացրել է ապրանքների ցանկի կրճատում խնդրարկելով ապրանքային նշանի գրանցումը հայկական կոնյակ (բրենդի) և գինի ապրանքների համար և հաշվի առնելով Մտավոր սեփականության գործակալության մոտեցումը, որ 10 տարուց ավել հնեցում ունեցող հայկական կոնյակի (բրենդի) և բարձրորակ գինու համար գրանցման ենթակա են նմանատիպ ապրանքային նշանները, բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանը գրանցելու մասին:

Բողոքարկողը համաձայն էր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ և նշեց, որ ապրանքային նշանը օգտագործվելու է 10 տարի և ավել հնեցում ունեցող հայկական կոնյակի (բրենդի) և «կանգուն» կամ «արենի» տեսակի խաղողից պատրաստված բարձրորակ գինու համար:

Փորձաքննության բաժնի պետը համաձայն էր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Վանիկ Մարգարյանի կողմից ներկայացված բողոքն ամբողջությամբ բավարարել, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և «ՐԱՖՖԻ РАФФИ RAFFI» (No20200207) ապրանքային նշանը գրանցել 33-րդ դասի «10 տարի և ավելի հնեցված սպիրտից պատրաստված հայկական կոնյակ (բրենդի), «կանգուն» կամ «արենի» տեսակի խաղողից պատրաստված բարձրորակ գինի» ապրանքների համար:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՎԱՐՈՍ ՍԻՄՈՆՅԱՆ